30.09.2016 թ.

## Արձանագրություն N 2

«Գ40ՀԴ-ՇՀԱՊՁԲ-16/1 » ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Գյումրի

30.09.2016 թ.
ժ. 14:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի կազմ՝

Նախագահ՝ Հայկուհի Ջանոյան

Անդամներ՝ Նվարդ Մկրտչյան

Արմեն Հարությունյան

Սիլվա Այվազյան

Հերմինե Հարությունյան

Քարտուղար՝ Արմենուհի Մինասյան

1. Տեղեկություններ գնման նախնական պայմանագիր կնքած այն անձանց (անձի) մասին, որոնց պատվիրատուն ուղարկել է գնային առաջարկ ներկայացնելու ծանուցում

«Գ40ՀԴ-ՇՀԱՊՁԲ-16/1 » ծածկագրով մրցույթի շրջանակներում apranq-15-2@shh.gnumner.am էլեկտրոնային հասցեով հայտ է ուղարկվել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ շրջանակային համաձայնագրեր կնքած բոլոր մասնակիցներին, միաժամանակ հայտարարությունը տեղադրվել է http://gnumner.am/am/category/209/1.html, հասցեում:

2. Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա ժամի մասին

Գնային առաջարկի հայտը բացվել է «Գյումրի թիվ 40 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում, ք.Գյումրի, Ֆրանց Վերֆելի հրպ 4 հասցեում, ծանուցման օրվան հաջորդող 7-րդ աշխատանքային օրը, ժամը 14:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները/անունները/ և գտնվելու վայրերի հասցեները,

3.1Գնային առաջարկ պարունակող ծրար կազմել և ներկայացրել է հետևյալ մասնակիցը.

| ՀՀ | Մասնակիցների անվանում/անուն | Հասցեներ, հեռախոսահամարներ |
|---|---|---|
| 1 | «Վիես Քոնսալթինգ» ՍՊԸ | ՀՀ, ք.Երևան, Շենգավիթ 2-րդ փ. 7/2-61<br>Հեռ. 093151058 |

3.2 Գնային առաջարկներ այլ մասնակիցներ չեն ներկայացրել:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

4. Տվյալներ ծրարները կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջների համապատասխանության մասին.

4.1 «Վիես Քոնսալթինգ» ՍՊԸ -ի կողմից ներկայացված ծրարը կազմված էր հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

5. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

5.1 «Գ40ՀԴ-ՇՀԱՊՁԲ-16/1 » ծածկագրով մրցույթի գնային առաջարկների ներկայացման հրավերով սահմանված կարգով մասնակիցը փակ կնքված ծրարով ներկայացրել է գնային առաջարկ՝ ինքնարժեքի հաշվարկ, հայտարարություն մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր հատկանիշների համապատասխանության և գրանցման պահից հետո դրանց առկայության, ինչպես նաև հրավերով սահմանված տեխնիկական հատկանիշներին համապատասխան ապրանքների մատակարարման մասին: Բոլոր ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և 2 օրինակ պատճեններից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

6. Մասնակիցների կողմից առաջարկված գներ

6.1 Մասնակիցը Գնային առաջարկ ներկայացրել է 1 չափաբաժնի համար: Առաջարկված գները նշված բոլոր չափաբաժինների մասով ցածր են 19.03.2016թ. Ա/Ձ Հասմիկ Սիմոնյանի և «Գյումրի թիվ 40 հիմնական դպրոց» ՊՈԱԿ միջև կնքված N «Գ40ՀԴ-ՇՀԱՊՁԲ-16/1» պայմանագրով հաստատված համապատասխան չափաբաժինների գներից:

6.2 Ստորև ներկայացված են արդեն իսկ կնքված պայմանագրի և «Վիես Քոնսալթինգ» ՍՊԸ կողմից առաջարկված գների համեմատական աղյուսակը.

ՀՀ դրամ /առ.ԱԱՀ/

| Չափաբաժինների համարները | Ապրանքի անվանումը | «Գ40ՀԴ-ՇՀԱՊՁԲ-16/1» պայմանագրով հաստատված ընդհանուր գին | «Վիես Քոնսալթինգ» ՍՊԸ-ի առաջարկած ընդհանուր գին |
|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* |
| 1 | Սննդի ծանրոց | 1 831 019 | 1 796 868 |

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

7. **Հանձնաժողովը որոշեց.**

Հանձնարարել Հանձնաժողովի քարտուղարին՝

7.1.1 Սույն արձանագրության լուսապատճենը տրամադրել մասնակցին,

7.1.2.Հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը էլեկտրոնային եղանակով՝

ա/ Հարցում ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ ըստ առանձին չափաբաժինների առաջին տեղ զբաղեցրած մասնակիցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ,

բ/ Ծանուցել «Վիես Քոնսալթինգ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև մեկ աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիր կնքած անձին ներկայացնել ձևավորված ցածր գներով ապրանքները մատակարարելու պահանջ և կնքվելիք պայմանագրի փոփոխության նախագիծը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

8. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը, վայրը

Սահմանել, որ «Գ40ՀԴ-ՇՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա 05.10.2016թ. ժամը 14:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

Հանձնաժողովի նախագահ ______________________________ Հայկուհի Զանոյան

Հանձնաժողովի անդամ ______________________________ Նվարդ Մկրտչյան

Հանձնաժողովի անդամ ______________________________ Արմեն Հարությունյան

Հանձնաժողովի անդամ ______________________________ Սիլվա Այվազյան

Հանձնաժողովի անդամ ______________________________ Հերմինե Հարությունյան